

- Կր.-Կարին
- ՄԿ.-Մակու
- ՄՉ.-Մուչ
- ՆՆ.-Նոր Նախիջևան
- ՊԼ.-Պոլիս
- ՋՂ.-Ջուղա
- Սբ.-Սեբաստիա
- Սլմ.-Սալմաստ
- Սվեդ.-Սուեդիա
- ՎԱ.-Վան
- Տփ.-Տփղիս

ԱԱՆԲ- Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան (Ռ. Սաքապետոյան, Երեւան, 2011)

ԳԲ - Գրաբարի բառարան (Ռ. Ղազարեան, ՀՀ. 1-2, Երեւան, 2000)

ԺՀԼԲ - Ժամանակակից Հայոց լեզուի բառարան (Հտ. 1-4, Երեւան, 1969-1980)

ՀԱԲ - Հայերեն արմատական բառարան (Հ. Աճառեան, Հտ. Ա-Դ, Երեւան, 1971-1979)

ՀԲԲ - Հայերէն բացատրական բառարան (Ստ. Մալխասեան, Հտ. 1-4, Երեւան, 1944-1945)

ՀԼԲԲ - Հայոց լեզուի բարբառային բառարան (Հտ. 1-7, Երեւան, 2001-2012)

ՄՀԲ - Միջին Հայերէնի բառարան (Ռ. Ղազարեան, Հ. Աւետիսեան, Երեւան, 2009)

ՆԲՀԼ-Նոր բառգիրք հայկազեան լեզուի (Հ. Գաբրիէլ Աւետիսեան, Հ. Խաչատուր Սիւրմէլեան, Հ. Մկրտիչ Աւգերեան, Վենետիկ, 1836-1837)

ՎՈՒ - Վարդգէս Ուրիշեան, Մեր արմատները նոր լոյսի տակ, Լոս Անճելէս, 1995

ԱԱԱԱ- Ամիրզոյլաթ Ամասիացոյ անգիտաց անպէտ կամ բժշկական նիւթոց, ի լոյս էած հանդերձ ծանօթագրութեամբ Կ. Յ. Բասմաջեան, Վիեննա, 1926:

Դաւրիժ.-Առաքել Դաւրիժեցի, Գիրք պատմութեանց, աշխատ. Լ. Ա. Խանլարեանի, Երեւան, 1990:

ԺԴ ՌՃՂ-ԺԴ դարի հայերեն ձեռագրերի յիշատակարաններ, Երեւան, 1950:

Հիւբշ.-Arm. St. Hübschmann, Armenische Studien, Leipzig, 1883.

ՀՄՀ- Ա. Մնացականեան, Հայ միջնադարեան հանելուկներ, Երեւան, 1980:

ՖրԴ-Ֆրիկ, Դիւան, Նիւ-Եորք, 1952:

ՉՄՇԿԱԾԱԳԻ ԲԱՐԲԱՌԸ

Գայիանէ Գետրոգեան

Չմշկածագը գտնուում է Խարբերդ քաղաքից մօտ 50 կմ հիւսիս-արեւմուտք լեռնային, անտառապատ վայրում¹: Վարչական առումով այն հնում մտնում էր Ծոփքի, իսկ նոր ժամանակներում՝ Խարբերդի նահանգի Դերսիմի գաւառի մէջ՝ լինելով Չմշկածագ գաւառակի կենտրոնը: Ըստ Թ. Յակոբեանի՝ Չմշկածագի մասին յիշատակութիւններ ունեն Մատթէոս Ուռհայեցին, Սմբատ Գունդստաբլը եւ ուրիշ հեղինակներ: Մինչեւ 15-րդ դարը այն մարդաշատ եւ բարեկարգ քաղաք է եղել, սակայն 1474 թուականին՝ մամլուք թուրքերի կողմից զրաւուելուց յետոյ, որին ուղեկցուել է բնակիչների զանգուածային գերեզմարումը, աստիճանաբար այն վերածուել է փոքրիկ գիւղաքաղաքի²: 1800-1830-ական թուականներին գիւղաքաղաքն ունեցել է մօտ 6000 բնակիչ, որից 4000-ը՝ Հայ, իսկ մնացածը՝ քրդեր, թուրքեր եւ այլք: Մեծ եղեռնի նախօրէին՝ 1915 թ. սկզբներին, քաղաքն ունեցել է 8000 բնակիչ, որից 6500-ը եղել է Հայ. ենթարկուելով 1915 թ. արհաւիրքներին՝ նրանց մի մասը զոհ է գնացել թուրքական կոտորածներին, իսկ փրկուածները բնակութիւն են հաստատել աշխարհի տարբեր կողմերում³:

Չմշկածագի բարբառային յատկանիշներին հակիրճ անդրադարձել է Ռ. Բաղրամեանը «Դերսիմի բարբառային քարտէզը» ուսումնասիրութեան մէջ զետեղուած «Չմշկածագի ենթաբարբառը» աշխատանքում⁴:

քում⁴, սակայն նրա կողմից ներկայացուած բարբառային տուեալները անցեալ դարի 10-50-ական թուականների իրողութիւններ են եւ նոր տուեալներով լրացման եւ ճշգրտման կարիք ունեն: Բարբառագիտութեան զարգացման արդի փուլում, երբ առանձին բարբառների ուսումնասիրութիւնների, ինչպէս նաեւ հայերէնի բարբառագիտական ատլասի ծրագրով շուրջ 500 հայկական բնակավայրերի բարբառային յատկանիշների զբանցման արդիւնքում կուտակուել է հսկայածաւալ նիւթ, որի բարբառային բազմաթիւ միաւորների, այդ թւում նաեւ Չմշկածագ քաղաքի խօսուածքի նորայայտ տուեալները դեռեւս գիտական շրջանառութեան մէջ չեն դրուել, խիստ կարեւորում է փաստական այդ հարուստ նիւթի սահմաններում ներկայացնել բարբառային միաւորների լեզուական իւրայատկութիւնները:

Սոյն աշխատանքում տրւում է Չմշկածագ քաղաքի լեզուական բնութագիրը համաժամանակեայ քննութեամբ՝ ըստ Հայերէնի բարբառագիտական ատլասի ծրագրով⁵ զբանցուած «Չմշկածագ» աշխատանքի⁶: Խօսուածքը զբանցողը Համբարձում Գասպարեանն է, որը ծնուել է Չմշկածագում: 1915 թուականին ընտա-

1 Տե՛ս Թ. Յակոբեան, Պատմական Հայաստանի քաղաքները, Երեւան, 1987:
 2 Տե՛ս Թ. Յակոբեան, նշ. աշխ., էջ 213:
 3 Տե՛ս Աոյն տեղը:

4 Ռ. Բաղրամեան, Դերսիմի բարբառային քարտէզը, Երեւան, 1960:
 5 Հայերէնի բարբառագիտական ատլասի ծրագրով, սկսած Ասխորդ դարի 80-ական թուականներից, շուրջ 500 հայկական բնակավայրերից հաւաքուել են Այութեր, որոնք պահուում են ՀՀ ԳԱԱ Հր. Աճառեանի անուան լեզուի ինստիտուտում:
 6 Տե՛ս Հայերէնի բարբառագիտական ատլասի Այութեր, Չմշկածագ, հտ. 28 (այսուհետեւ՝ ՀԲԱՆ, 28):

նիքով հաստատուել է Հայաստանում, որտեղ էլ Համբարձում Գասպարեանը ստացել է բարձրագույն կրթութիւն: Նա մասնագիտութեամբ եղել է բանասէր եւ լրացրել է իր մայրենի խօսուածքը:

Չմշկածագի խօսուածքում գործառոյ ձայնաւոր Հնչիւնները՝ ա, ի, է, օ, ու, ը, իրենց որակական յատկանիշներով չեն տարբերուում ընդհանուր հայերէնի ձայնաւորներից: Ա Հնչիւնը համապատասխանում է գրաբարեան ա-ին եւ գործառուում է Հինհայերենեան ձայնեղներից կամ դրանցից առաջացած խուլերից յետոյ (պանջար, պարագ, պաց, կարուն, տաս եւն)⁷, նախորդում է մ, ւ ունգայիններին (աման, արանք, ամբ, մանգաղ, մանէլ, ցամաք, համար եւն), ինչպէս նաեւ շչականներին (ժանգ, խաշէլ, խաչ, պաժինք, արժէլ, ջանջ եւն): Գրաբարի ի եւ ու ձայնաւորները եւս փոփոխութիւններ չեն կրում (պուրտ, տուտ, ծուգ, ճուր, ուղէ, գըձիգ, գըձիգ, սիրոյ, խընամի, դարի, ճօրի եւն):

Գրաբարի ձայնեղներից կամ դրանցից առաջացած խուլերից յետոյ, ինչպէս նաեւ միավանկ եւ երկվանկ բառերի սկզբում գտնուող ո ձայնաւոր Հնչիւնին համապատասխանում է օ ձայնաւորը (օշ, օրփ, օրտ, օճիլ, օնուլ, օսգի, սօղ, ծօր եւն):

Միավանկ եւ երկվանկ բառերի սկզբում գրաբարի ե-ի դիմաց գործածուում է է ձայնաւորը (էս, էփ, էլլալ, էղնիգ, էփէլ եւն): Է ձայնաւոր է համապատասխանում նաեւ բառամիջի շեշտակիր ե-ին (թէլ, խէլք, վէց, դէղ, ցէց եւն) Բ-ին նախորդող բառակցքի ե-ի դիմաց առկայ է է կամ ի ձայնաւոր (երեկոյ-իրիկում, երեսալ-երուզնալ, երկինք-երգինք, երեք-իրեք, երիցակին-իրիցգին եւն): Բառակցքի ե-ի դիմաց ո ձայնեղից առաջ որոշ բառերում գործածուում է ա

ձայնաւոր (եղբայր-ախպար, երեսուն-աւսուն, եղինջ-աղինջ եւն):

Խօսուածքում առկայ են բաղաձայնների անկման մի շարք դէպքեր: Գրաբարի ւ վերջնահնչիւնով միավանկ բառերը գործառուում են առանց վերջնահնչիւն ւ-ի (դաղձ, հարս, թօն, ձուկ, մուր, խուփ եւն): Ինն (ինը) եւ ինքս (ինքը) բառերում ւ-ի անկումը ուղեկցուել է գաղտնավանկի ը-ի պահպանմամբ: Նկատելի է նաեւ ո ձայնորդի անկում որոշ բառերի բաղաձայնական կապակցութիւններում (աժան, աժէլ, խաշէլ, ճաղաց եւն): Խօսուածքը յատկանշուում է նաեւ Հնչիւնների յաւելման դէպքերով: Պայթականներից ու կիսաշփականներից առաջ որոշ բառերում առկայ է ւ-ի յաւելում (ամըշնալ, գանանշէլ, գըղնուց, ջաշնալ, քինթ եւն):

Չմշկածագի խօսուածքում շեշտակիր է վերջին վանկը (արձէլ, աղընձէլ, պաժնէլ, հաստալ, ցամքիլ, բառուրնալ եւն) Շեշտանախորդ վանկերի ձայնաւորները սղուում են կամ փոխարկուում ը-ի (ամըշօղ, երգընալ, թէթէնալ, ժողուլ, վախնալ եւն): Չայնաւորների սղում է նկատուում նաեւ եռավանկ բառերում (աղճուր, ալլէլ, կօղնալ, թաթխէլ, պուսնիլ, սօրուիլ եւն): Բառակցքման ժամանակ փակ վանկի շեշտազրկուած ի ձայնաւորը փոխուում է ը-ի (սըրդի, թըզի, մըսի եւն): Այն փոփոխութեան է ենթարկուում նաեւ - բառավերջի բաց վանկում՝ դառնալով ու, օրինակ՝ կօղու, խընամու, ճօրու եւն: Բառակցքման ժամանակ փոփոխուում են նաեւ փակ եւ բաց վանկերի շեշտազրկուած ու, է ձայնաւորները (թըթի, թըզի, թըրի, ճըրի, լէզուի, գաղուի, մէղուի, իշու, սիրում, դիրում եւն):

Չմշկածագի խօսուածքում գործառուում են յոգնակի թուի-եր (եր), -ներ (ներ), -նի, -ք, -վի, -ստան վերջաւորութիւնները: Դրանց ընտրութիւնը պայմանաւորուած է թուանիշ հիմքերի վանկաբանակութեամբ եւ իմաստային առանձնայատկութիւններ

7 Օրինակները տրվում են բարբառային գիտական տառադարձությամբ:

րով: -Եր յոգնակերտ վերջաւորութիւնը խօսուածքում գործառուում է -եր Հնչիւնական տարբերակով: -եր թուանիշ վերջաւորութիւն են ստանում միավանկ բառերը (ճուր-ճըրէր, դուռ-դընէր, միս-մըսէր, թէլ-թէլէր եւն) Ինչպէս երեւում է օրինակներից, ու, ի ձայնաւորներով միավանկ բառերի յոգնակի թուածեւերի հիմքը Հնչիւնափոխուում է Բազմավանկ բառերի յոգնակի թուածեւերը կազմուում են -նի եւ -ներ յոգնակերտ վերջաւորութիւններով (աղպիր -աղպիրնի, անուռ-անուռնի, պանջար-պանջըրնի, իլիգ-իլիգնի, խընձօր-խընձօրնէր, ճաղիգ - ճաղիգնէր, էրէս - էրէսնէր եւն): Չայնաւորով վերջացող բազմավանկ բառերը, բացի -նի, -ներ յոգնակերտ վերջաւորութիւններից, ստանում են նաեւ -ք, -ստան, -դաք, -դիք յոգնանիշ մասնիկները՝ յաճախ զուգահեռաբար (քէնի-քէնէստան, ճօրի-ճօրէստան, կաթա-կաթանէր, սաղանալ-սաղանանի/սաղանդիք, առու-առուընի, կինի-կինիք, հարսընցու-հարսընցուներ, մէղու-մէղուընի/մէղուընէր եւն): -Վի-ով կամ նրանով բաղադրուած յոգնակերտները գործածուում են մարմնի զոյգ մասերի դէպքում՝ զուգահեռաբար կազմուելով նաեւ -նի յոգնակերտով (անգաշ-անգըշուի//անգըշուընի, աշք-աշուի//աշուընի, ձուկ-ձընգուի//ձընգուընի եւն):

Սեռական-տրական հոլովածեւերը, որոնք բնութագրուում են նաեւ յօդառութեամբ, կազմուում են հոլովանիշ մասնիկներով եւ Հնչիւնական հերթագայութիւններով: Դրանք ընդգրկուում են գործառութեան հետեւեալ ոլորտները: Ի-ն ամենատարածուած եւ ընդհանրական արժէք ունեցող հոլովանիշ մասնիկն է եզակի թուի ձեւերում: Այս հոլովման են ենթարկուում նախկին ք. յոգնակերտով բառերը (խէլք-խէլքի, միդք-մըդքի, հարսնիք-հարսնիքի, փառք-փառքի եւն), կենդանիների եւ թռչունների անունները (աղուէս-աղուէսի, ուլ-ուլի, վառիգ-վառիգի եւն), անձնանունները (Անուշ-Անուշի, Գարաբէր-Գարաբէրի, Սաթէնիգ-Սաթէնիգի, Գարօ-Գարօյի եւն): Ի հոլովանիշ մասնիկը

ընդգրկուում է նաեւ փոխանուանաբար գործածուող միւս խօսքի մասերը (վէնձը «մեծը»-վէնձին, սէլը-սէլին, էփօղը-էփօղին եւն): Գրաբարեան ւ վերջնահնչիւնով բառերը ենթարկուում են ան հոլովման (կառ «գառն»-կառան, տուտ «դուտն»-տրուան, ձուկ «ծուկն»-ձընգան, ծուգ «ձուկն»-ծըզան, մուգ-մըզան եւն): Տեղանունների սեռական հոլովը կազմուում է՝ բառի վերջին անջաղանջով -ա կամ -օ հոլովական վերջաւորութիւնները (էրէս-էսան-էրէսան, Սէսան-Սէսան, Գէսարիս-Գէսարիս, Սասուն-Սասուն, Մուշ-Մըշօ եւն), ազգակցական յարաբերութիւն ցոյց տուող բառերի եւ դրանցով բաղադրուած բարդութիւններին՝ հոլովական հիմքի եւ -ոջ մասնիկի համադրութեամբ (դէր - դիրօճ, քօր-քըրօճ, կէսուր-կէսուօջ, դալ - դալօճ եւն), ժամանականիշ բառերին՝ -վա հոլովական վերջաւորութեամբ (ամառ-ամըրուա, առտուն «առաւօտ»-առտըւա, իրիգուն-իրիգուա, գէսօր-գէսօրուա, շապաթ-շապաթուա եւն):

Յոգնակի թուածեւերի սեռական հոլովը կազմուում է ու հոլովանիշ մասնիկով (անուռնի -անուռնու, կիշերնի-կիշերնու, ճըրէր-ճըրէրու, դընէր-դընէրու եւն): Բացառական հոլովի իմաստը արտայայտուում է -էն (աղուէն-աղուէնէրէն, թօնէն-թօնէրէն, հացէն-հացէրէն, դընէն-դընէրէն եւն). գործիական հոլովին՝ -ով վերջաւորութեամբ համադրուած կազմութիւններով (ախկաղով-ախկաղներով, ամսով-ամսըներով, քարով-քարերով եւն): Ներգոյական հոլովի իմաստը դրսեւորուում է վերլուծական կազմութեամբ՝ մէճ յետադրութեամբ եւ սեռական հոլովածեւով բաղադրուած (ճըրին մէճ, կէղին մէճ, աշխըրքին մէճ, փօրուն մէճ եւն):

Այսպիսով, խօսուածքի անուանական հոլովման համակարգը յատկանշուում է արտաքին թեքմամբ հոլովանիշ վերջաւորութիւններով ինչպէս եզակի, այնպէս էլ յոգնակի թուի ձեւերում, ինչպէս նաեւ եզակի թուի յարացոյցում ի հոլովանիշ

մասնիկի, իսկ յոգնակի թուում՝ ու հոլովա- նիչի ընդհանրական արժեքով:

Ես, դու, մենք, դուք անձնական դերա- նունների տրական հոլովը կազմում է գրաբարեան հոլովածեների (ինձ, մեզ, քեզ, ձեզ) հնչիւնական տարբերակների եւ ի վերջաւորութեան բաղադրութեամբ, այս- պէս՝ ինձի, քիզի, միզի, ծիզի: Հայցական հո- լովի իմաստը դրսեւորում է տրականածե կազմութեամբ (Տու՛ն ինձի գառգիր, Սաղաւան միզի խապէց եւն): Անձնական դերանուն- ների բացառական հոլովածեը կազմում է տրականի հիմքից -մէ կամ -նէ (իմնը- նէ/իզմէ, քումնէ/քիզմէ, մէր-մընէ/միզմէ, ծէր- մընէ/ծիզմէ), գործիականը՝ -մով կամ -նով հոլովանիչ թեքոյթների զուգադրութեամբ (իզմով/իզնով, քիզմով/քիզնով, միզմով/միզ- նով, ծիզմով/ծիզնով, իրմով, իրէնցմով): Եզակի 3-րդ դէմքի իմաստը արտայայտում է ա- մի կամ ան (Անի/ան խօսաց «Աս խօսեց»), յոգ- նակի 3-րդ դէմքինը՝ անօնք (Անօնք կացին «Արանք գնացին») ձեւերով: Ցուցական այս, այդ, այն դերանունները դրսեւորում են աւ, ադ, ան, սա, դա, նա դերանունները՝ ասի, ադի, անի հնչիւնափոխական տարբերակնե- րի միջոցով: Օրինակ՝ աս կիրքը «այս գիր- քը», ադ ձառը «այդ ձառը», ան թուխտը «այն թուղթը»: Ասի քար ա «Սա քար է»: Ադի հող ա «Դա հող է»: Անի փաղ ա «Նա փայտ է»: Վերոնշեալ դերանունների յոգ- նակի թուի ձեւերն են՝ ասօնք, ադօնք, ա- նօնք/սըվօնք, դըվօնք, նըվօնք: Խօսուածքում պահպանուած է այս, այդ, այն (սա, դա, նա) ցուցական դերանունների եռանդամութիւ- նը՝ աս մարտը, ադ մարտը, ան մարտը: Սրանց սեռական-տրական հոլովածեները կազմ- ւում են այսր, այդր, այնր տիպի հիմքով, այսպէս՝ ասօր դուռը, ադօր պօնը, անօր շուռը: Ասօր մօղէցաւ, Ադօր դրաւ, Անօր հայեցաւ:

Անորոշ դերբայը յատկանշւում է 3 լծորդութեամբ (գրաբարեան 4 լծորդու- թիւններից (ա, ի, է, ու) խօսուածքում պահ- պանուել են 3-ը՝ ա, ի, է (էրթալ, կողմալ, էլ-

լալ, թուլմալ, նըսդիլ, կադդիլ, պէրէլ, տընէլ եւն): Միայն թողնել բայն է պատկանում ու լծոր- դութեան (թողուլ):

Արեւմտահայ խմբակցութեան բար- բառների դերբայների շարքը համեմատա- բար աղքատ է: Այդպէս է նաեւ Չմշկածա- գի խօսուածքում, որում բացակայում են անկատար եւ ապառնի դերբայները: Վա- ղակատար դերբային բնորոշ է -էր վերջա- ւորութիւնը (մընացէր իմ, գարմընցէր իմ եւն): Յարակատար դերբայը, բայասեռով պայ- մանաւորուած, դրսեւորում է -ած վերջա- մասնիկն ունեցող ձեւով, այսպէս՝ քընա- ցած չօշուխ «քնած երեխա», էփած հաց «թխած հաց», նըշանուած ախշիզ «նշանուած աղջիկ» եւն: Ա խոնարհման բայերի ենթակայա- կան դերբայը կազմւում է անցեալի հիմքի եւ օղ վերջաւորութեան զուգադրութեամբ (ախցօղ, կօղցօղ, խախցօղ, հասաղցօղ, վախցօղ եւն): Գալ, տալ, լալ բայերի ենթակայական դերբայը արտայայտում է էգօղ, լացօղ, դը- ւօղ ձեւերով: Ժխտական դերբայը ձեւա- ւորում է անորոշի հիմքի եւ -էր, -ար, -իր վերջաւորութիւնների համադրութեամբ՝ (չիմ) ըւէր, (չիմ) մընար, (չիմ) խօսիր: Խօսուած- քին բնորոշ է նաեւ ընթացակցական դեր- բայի գործածութիւնը, որը կազմւում է ա- նորոշի հիմքի եւ -էն վերջաւորութեան բա- ղադրութեամբ, այսպէս՝ ուղէլէն, խօսալէն, վազէլէն, խընդալէն եւն (Ուղէլէն գէլթայ «ուտելով գնում է», Խօսալէն գը մօղէնայ «խօսելով մօտենում է», Վանգէլէն էգաւ «վազելով եկաւ»): Օժանդակ բայի եզակի 3-րդ դէմքը արտայայտում է ա-ով, օրի- նակ՝ Անի աղէզ մարտ ա «նա լաւ մարդ է»: Չաղանը հիւանդ ա «երեխան հիւանդ է»: Օժանդակ բայի անցեալ ժամանակը դրսե- ւորում է պարզ ձեւերով, այսպէս՝ էս էի, տուն էիր, ան էր, մէնք էանք, տուք էիք, անօնք էին:

Չմշկածագի խօսուածքն ունի 4 եղա- նակ՝ համապատասխան 5 իմաստներով՝ սահմանական-ենթադրական, հարկադրա-

կան, ըղձական եւ հրամայական: Սահմա- նական եղանակի ներկայ եւ անցեալ ան- կատար ժամանակածեների իմաստներն արտայայտում են գրաբարի ներկայի ձե- ւերի եւ կու (գը, գ) եղանականիչի զու- գորդմամբ, այսպէս՝ գը սիրիմ «սիրում եմ», գը սիրէս, գը սիրայ, գը սիրինք, գը սիրէք, գը սիրին, գուղիմ «ուտում եմ», գուղէս, գուղայ, գուղինք, գուղէք, գու- ղին: Յիշեալ կառոյցները դրսեւորում են նաեւ սահմանական եւ ենթադրական եղա- նակների ապառնի եւ անցեալ ապառնի ժամանակածեների իմաստներ՝ կազմելով համանունութեան եռանդամ շարք: Ան- ցեալ կատարեալը կազմւում է պարզ ձեւե- րով (խըմէցի, խըմցիր, խըմց, խըմցինք, խը- մէցիք, խըմցին, հասալ, հասար, հասաւ, հա- սանք, հասար, հասաւ): Է խոնարհման պարզ բայերի անցեալ կատարեալի իմաստը դրսեւորում է անցեալի ցոյական հիմքով եւ ներգործածե վերջաւորութիւններով՝ բաղադրուած կազմութիւններով, այսպէս՝ սիրէցի, սիրցիր, սիրէց, սիրցինք (անք), սիրե- ցիք, սիրցին: Մի խումբ անկանոն բայերի (առնել, բանալ, բերել, դնել, գալ, տալ, զարկել, թողնել, տեսնել) անցեալ կատա- րեալի եզակի 3-րդ դէմքը կազմւում է կրաւորածե աւ վերջաւորութեամբ (առաւ, պացաւ, պէրաւ, տըրաւ, էգաւ, դէսաւ, դըւաւ, նըս- տաւ, հասաւ, գարգաւ): Վաղակատար ժամա- նակածեի իմաստը արտայայտում է վա- ղակատար դերբայի եւ օժանդակ բայի խո- նարհուած ձեւերի յարադրութեամբ (կըրէր իմ, կըրէր էս, կըրէր այ, կըրէր ինք, կըրէր էք, կը- րէր ին): Յարակատար ժամանակը կրաւո- րական սեռի բայերի դէպքում դրսեւոր- ւում է -ած վերջամասնիկն ունեցող յարա- կատար դերբայով (խափուած իմ, խափուած էս, խափուած ին): Ներգործական եւ չէզոք սե- րի բայերի դէպքում յարակատար ժամա- նակի նշանակութեամբ գործածւում են վաղակատար դերբայով բաղադրուած կա- ռոյցները:

Ըղձական եղանակի իմաստը դրսե- ւորում է համադրական բայածեներով (հիմքակազմութեամբ, լծորդ ձայնաւորնե- րի առկայութեամբ եւ դիմաթուանիչ վեր- ջաւորութիւններով): Ինչպէս գրական լե- գուններում եւ տարածքային այլ տարբե- րակներում, այնպէս էլ Չմշկածագի խօ- սուածքում ըղձականի իմաստով գործած- ւում են գրաբարեան ներկայ եւ անցեալ անկատար բայածեները, որոնք կընլ են միայն հնչիւնական փոփոխութիւններ եւ հայերէնի ոչ մի դրսեւորման մէջ ձեւային տարբերութիւն չունեն (կըրէի, կըրէիր, կը- րէր, կըրէանք, կըրէիք, կըրէից): Հարկադրա- կան եղանակի իմաստը արտայայտում է ըղձական եղանակի բայածեների եւ դի (պիտի) եղանականիչի յարադրմամբ (դի կըրիմ «պիտի գրեմ», դի կըրես, դի կըրայ, դի կը- րինք, դի կըրէք, դի կըրից):

Հրամայական եղանակի եզակի թուի ձեւերը կազմւում են ա, իր դիմաթուանիչ վերջաւորութիւններով: Ա վերջաւորու- թիւն ստանում են Ե եւ ա խոնարհման պարզ բայերը (արրա՛, ձամա՛, պարմա՛, փօ- խա՛, մընա՛, խընդա՛, կարթա՛, հասադա՛ եւն), -իր վերջաւորութիւն՝ աժանցաւոր բայերը (ան- ցի՛ր, էլի՛ր, էճի՛ր, հասի՛ր, մըտի՛ր եւն): Ընդ ո- րում՝ ա խոնարհման աժանցաւոր բայերը - իր վերջամասնիկը յաւելում են անցեալի ցոյական հիմքին (պարալցիր, տըմացի՛ր, կիո- ցի՛ր, հասաղցի՛ր, վէնձցի՛ր, մօղէցի՛ր եւն): Հրա- մայականի յոգնակի թուի ձեւերին յա- տուկ է -էք վերջաւորութիւնը, որը հա- մադրում է անցեալի ցոյական հիմքին (պընձեցէ՛ք, խըմեցէ՛ք, բաղմեցէ՛ք, վըւացէ՛ք, հասաղցէ՛ք, մաղցէ՛ք, ուրխըցէ՛ք եւն): Գալ բայի հրամայականը կազմւում է եկ հիմ- քով (էգօր-էգէ՛ք):

Այսպիսով, Չմշկածագի խօսուածքում իմաստային տարբերակուածութիւն են դրսեւորում գը (գ) եղանականիչ մասնիկով կազմութիւնները, որոնք արտայայտում են ենթադրական ապառնի եւ անցեալի

ապառնիի, սահմանական ներկայի եւ անցեալ անկատարի, ապառնիի եւ անցեալի ապառնիի իմաստներ: Սրանից հետեւում է, որ այս խօսուածքում զը (գ) եղանականիչով ժամանակաձեւերը դրսեւորում են ոչ միայն խօսելու պահին, դրանից առաջ կամ դրանից յետոյ կատարուող, այլեւ հաստատապէս եւ ենթադրաբար կատարելի գործողութիւն, իսկ պիտի-ով կազմութիւնները՝ միայն հարկադրաբար կատարուելիք գործողութեան իմաստ:

Ժխտական խոնարհման յարացոյցը, ինչպէս բարբառների գերակշիռ մասում, Չմշկածագի խօսուածքում եւս բնորոշում է նախամասնիկաւորումով: Ժխտական նախամասնիկներն են չի-ն եւ մի-ն: Եղանականիչ նախամասնիկ չունեցող ժամանակաձեւերի (դերբայակազմ ժամանակաձեւեր, անցեալ կատարեալ, ըզձական (անցեալ-ապառնի) հաստատական եւ ժխտական կազմութիւնները ունեն միեւնոյն ձեւը (տարբերութիւնը միայն չի ժխտական մասնիկի մէջ է): Անցեալ կատարեալի եւ ըզձական եղանակի ժամանակաձեւերի ժխտական խոնարհումը դրսեւորում է հաստատական խոնարհման ձեւերի եւ չի ժխտական մասնիկի նախադաս գործածութեամբ, այսպէս՝ անց. կատ. չի կըրէցի, չի կըրէցիր, չի կըրէց, չի կըրէցիք, չի կըրէցին, ըզձ. ապառնի՝ չի խըմիմ, չի խըմիս, չի խըմայ, չի խըմիք, չի խըմիմ: Գը (գ) եղանականիչ ունեցող ժամանակաձեւերի ժխտականը կազմում է ժխտական դերբայի (կամ նրա փոփոխականների) եւ օժանդակ բայի ժխտական ձեւերի յարադրութեամբ (չիմ սիրէր, չէս սիրէր, չի սիրէր, չիք սիրէր, չէք սիրէր, չիմ սիրէր): Հարկադրական եղանակի ժխտական խոնարհման ձեւերում չ մասնիկը աւելանում է եղանականիչին, որը հանդէս է գալիս բոյի ձեւով (չիբոյի խըմիմ «չպիտի խմեմ», չիբոյի խըմէս, չիբոյի խըմայ, չիբոյի խըմիք, չիբոյի խըմիմ): Արգելական հրամայականի իմաստը արտայայտուում է մի/մ արգելական

մասնիկի նախադաս կիրառութեամբ (մի խաղա՛ր, մի մընա՛ր, մ՛ուդէր, մը գարտա՛ր եւն):

Չմշկածագի խօսուածքում որոշելուութիւնը դրսեւորում է ը եւ ց որոշիչ յօդերով), այսպէս՝ Ձառը ձադգէցաւ «ծառը ծաղկեց»: Գօվը ձընէր էր «կովը ծնել էր»: Դուցն արեցաւ «տունը աւերուեց» եւն: Ն որոշիչ յօդը գործառուում է ձայնաւորայանք բառերի դէպքում: (Խօսուածքը յատկանշուում է անորոշ յօդի յետադաս գործածութեամբ) (Մարթ մի ու գընիգ մի գըլլիմ «մի մարդ ու մի կին են լինում»): Օր մի աս մարտը գը հըվըն(դ)նայ «մի օր այս մարդը հիւանդանում է»): Յատկացուցիչի եւ յատկացեալի համաձայնութիւնը արտայայտուում է համանիչ կառոյցների գործածութեամբ՝ որոշեալ յատկացեալի հետ որոշեալ յատկացուցիչ (ձառիմ դէրէր «տէրէս», արդիմ խօղը, ծիուց բօշը եւն) եւ անորոշ յատկացեալի հետ անորոշ յատկացուցիչ (ձառի դէրէս, արդի խօղ, ծիու բօշ): Անձի եւ իրի անունների դէպքում ուղիղ խնդիրը դրում է հայցական հոլովով (Կիրկօրը գը սիրայ Արշագը «Գրիգորը սիրում է Արշակին»): Հարսը դարիմ «հարսին տարան», Միգալը քար գը դաշայ, հող գը բերայ «Մինասը քար է տաշում, հող է բերում» եւն): Անորոշ դերբայով արտայայտուած նպատակի պարագան դրում է տրական հոլովով (Կընաց արդը ճըրէլու «գնաց արտը ջըրելու»): Էգաւ հաց ուղէլու «եկաւ հաց ուտելու» եւն): Տեղի պարագայի իմաստը դրսեւորում է վերլուծական (մէշ կապ+սեռական հոլովաձեւ՝ Էկուց մէն գըպանի: Կէդիմ մէն գաքրի) եւ համադրական՝ հայցական հոլովաձեւով արտայայտուած կառոյցներով (Էկիմ գըպանի: Կէղը գաքրի): Խօսուածքը յատկանշուում է հետ, մօտ, մէջ, վրայ, առջեւ կապերի յետադաս կիրառութեամբ (քարիմ քօվը «քարի մօտ», ախպօր մօդ «եղբօր մօտ», ընգէրոց հէդ «ընկերների հետ», դան առնէ «տան առաջ» եւն):

Չմշկածագ քաղաքի հնչիւնաքերականական եւ բառապաշարային յատկանիչների քննութիւնը կարեւորում է արեւմտահայ խմբակցութեան բարբառային միաւորի պահպանուած վիճակի ամրագրմամբ եւ բարբառային նիւթը անդառնալի կորստից փրկելու փաստով:

Ստորեւ տրուում է Յ. Թումանեանի «Սուտխօսանը» հեքիաթը Չմշկածագի խօսուածքով:

Սուտխօսանը

Գըլլի-չըլլի թակավօր մի գըլլի: Աս թակավօրը իրէն էրգիրին մէճ իլան գէնա. «վէվ օր անանգ սուդ ըսա, օր էս ըսիմ սուդ ա, թակավօրութանըս գէսը անօր գուդամ»:

Չօբան մը գուկա, գըսա.
 -Թակավօրն աբրաձ գէնա, իմ բաբըս դայնագ մը ունէր, օր ասդըղէն գէրգընցընէր, էրգընցըն աստըղնէրը գը խառնէր:
 -Գըլլի,-չուղաբ գուդա թակավօրը: -Իմ դադաս ըլ չըբուխ մի ունէր. մէգ ձարը պէրանը գը տընէր, մէգալ ձարը գէրգընցընէր, արէկագէն գը վառէր:

Սուտխօսանը կըլօխը քէրէլօվ տուրս գէրթա: Թարգի մի գուկա, գըսա.
 -Նէրօղ գըլլիս, թակավօր, էս թէգ դիկայի, ուշացա: էրէգ շադ արգէվ էգավ: Գաձագնէրը ջաթէցան, էրգինքը բառէցավ, կացէր էի գարգըղնէլու:
 -Հա, աղէգ էս էլէր,-գըսա թակավօրը,-ամա աղէգ չէիր գարգըղնէր, աս առդու քիշ մը արգէվ թակէցավ:
 Աս ըլ տուրս գէրթա:
 Նէրս գը մըննա ախկադ կէղացի մի գօդիգը թէվին դագ:
 -Տուն ի՞շ գուգէս, այ մարտ,-գը հարցընա թակավօրը:
 -Ինձի գօդիգ մի օսգի բարդք էս, էգէր իմ դանիմ:
 -Գօդիգ մի օսգի՞,-գարմանք գը մընա թակավօրը: -Սուդ գը խօսաս, էս քիգի օսգի բարդք չիմ:
 -Տէ օր սուդ գը խօսամ, թակավօրութանը գէսը դու՛ր:
 -Չա՛, շա՛, շիդագ գըսիս,-խօսկը գը փօխա թակավօրը:
 -Շիդագ գըսիմ նա, գօդիգ մի օսգին դու՛ր: